№ 2 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 3 ՍԵՊՏ. ՍՈՒԱՂԻՆ 1918 ՏԱՐԻ ԵՐԵՔՇԱԲԹԻ, 3 ՍԵՊՏ. № 2

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցութեան

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի կիրակի և տօն օրերից) առ. ժ. 9 2 ը, իսկ գրասենակը նաև երեկոյեան ժ. 6—8 ը։ Հասցէն՝ Тифлисъ, Головинскій просп., 25, телеф. 10-99.

Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուով առաջին երեսի վրայ 50 կոպ. վերջին երեսի վրայ՝ 30 կ.։

1) Յօդուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։

2) Յօդուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։

3) Չտպագրուած յօդուածները չեն վերադարձւում։

4) Տպագրուած յօդուածների համար վճարւում է որոշուած տոկոսաբաժին։

5) Այն յօդուածները, որոնց տակ չէ գրուած վարձատրութեան պահանջ կը համարուին ձրի։

ԲԱՑՈՒՄԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՕՐԱԹԵՐԹԻ

Բաժանորդագինն է՝

1 ամիսը	8 ռ.	3 ամիսը	21 ռ.
2 ամիսը	15 ռ.	4 ամիսը	25 ռ.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 50 ԿՈՊ.

Հասցէն՝ Тифлисъ, Головинскій просп. № 25. Tiflis, Rédaction du journal „Jogovrdi Dzain". Тел. 10-99.

Թիֆլիս, 3 սեպտեմբերի

ԲԱԳՈՒՆ ԵՒ ՄԵՐ ԱՆԵԼԻՔԸ

Վերջին լուրերը կրկին գրաւում են բոլորի ուշադրութիւնը դէպի Բագու, որը արդէն քանի ամիս է, ինչ դարձել է տարբեր ոյժերի պայքարի և մենամարտի մի խորշոր բեմ։ Երեք շաբաթ առաջ եկած տեղեկութիւնները Բագուի անկման մասին, որոնք սխալ դուրս եկան, ստեղծեցին մի անհագին պրակտնութիւն Բագուի վերաբերմամբ, որը ցոյց տուեց, թէ որքան մեծ և առաջնակարգ դեր է խաղում Բագուն մեր թէ քաղաքական և թէ տնտեսական կեանքում։ Այն յուզմունքը և մտքերի և կրքերի բռնկումը, որը առաջ եկաւ այդ օրերին Բագուի հետ կապուած հարցերը քննելուց, միանգամայն պարզօրէն ցոյց տուին, որ մեծ և անփոխարինելի է Բագուի դերը մեր իրականութեան մէջ և որ դլխաւորն է՝ նրա դերը չի սահմանափակում միմիայն Կովկասի կամ Ռուսաստանի շահերին ծառայելով, այլ նա համաշխարհային է բառիս բուն իմաստով։ Պարզ էր ուրեմն այն երկիւղը, որ առաջ եկաւ Բագուի անկման սխալ լուրերը ստանալիս։ Պարզ և հասկանալի է և այն երկիւղը, որը կրկին ծնունդ է առնում այժմ, երբ նորէն Բագուի հարցի շուրջը քաղաքական և դիւանագիտական հորիզոնները մթնում են և ամպում շնորհիւ Թնդանօթների հրի և ծխի...

Ի՞նչ է նշանակում այս երկրորդ կռիւը Բագուի շուրջը։ Ի՞նչ կարող է բերել նա մեզ, անդրկովկասցիներիս ընդհանրապէս և հայերիս մասնաւորապէս։ Ահա այն հարցերը, որոնց պատասխան տալը անհրաժեշտ է և որոնց ոլորտից կը բղխի և մեր տակտիկան, մեր գործելակերպը այն ահեղ պայքարում, որը երևի շուտով տեղի կունենայ մեր երկրում երկու հզօր և հինաւուրց թշնամիների միջև։

Բոլորիս համար անտարակոյս է այն փաստը, որ Բագուի մենամարտը չէ կրում այլ ևս թուրք-բոլշեւիկեան նուազ բնոյթ և սկսում է դառնալ մի նորագոյն հանուած այն կատաղի կռիւների, որոնք տեղի են ունենում հեռաւոր արևմուտքում մի կողմից գերմանական զօրքերի և միւս կողմից անգլօ-ֆրանսական և ամերիկեան զօրքերի միջև և որոնք երևի պիտի վերջնական նպէս որոշեն հնարաշխարհային այս արիւնահեղ պատերազմի վաճառը։ Եւ այս նոր հանուածը, որպէս ծնունդ մեծ և դեռ ևս հզօր պետութիւնների ոյժերի հանդիպումը, հաւանական է, որ շատ շուտով կը ստանայ այնպիսի մի բնոյթ, որը մեր Անդրկովկասեան ազգութիւնների ֆիզիքական գոյութիւնը և քաղաքական բոլոր անկախութիւնները և առանձնայատկութիւնները կը դնի անօրինակ պայմանների մէջ, ստիպելով մեզ նորէն դառնալ զօր ոյժերի թոյլ և կամազուրկ խաղալիքներ։

Պատերազմը—ոյժերի փորձութիւն է, բաղդի դաժան մի խաղ և նա նամանաւանդ ստանում է այդ բնոյթը, երբ նրա հասակը հաշուում է ոչ ամիսներով, այլ արդէն տարիներով։ Զգէտք է մոռանանք այս պարտաւորեցուցիչ հանգամանքը, ևս առաւել, չպէտք է խաբուենք կռուող կողմերի գանազան նուէրով երբեմն պատրաստ կապիտալի, և տարուելով նրանցով նորէն չպէտք է նետենք մեր փոքրիկ և թոյլ ազգերի բաղդն ու վիճակը պատմական փորձութիւնների և պատահականութիւնների դիրքը։ Պէտք է յիշենք, որ խոշոր պատմական դէպ, որպէս կռուող ոյժ, մենք չենք կարող կատարել չորս տարի կռուելուց և մի տարուայ անասելի լքումից յետոյ։ Երբէք էլ չէինք կարող կատարել և նամանաւանդ չէինք կարող կատարել այս պատերազմում, երբ հրապարակ են բերուած ոչ թէ հազարաւոր, այլ միլիոնաւոր ոյժեր պատրաստուած և զինուած այնպէս, ինչպէս կարող է պատրաստուած լինել մի ժողովուրդ, մի զօրք, որի համար ծառայեցրել են ժարդկային գիտութեան և տեխնիկայի բոլոր կատարելագործութիւնները։ Ի՞նչ դեր կարող էինք խաղալ այս մեծ կռուում մենք, եթէ ոչ մենաթոյլ և ամենանաննշան։ Ինչ օգնութիւն կարող էինք բերել կռուող ոյժերին։ Շատ չնչին։ Իսկ փաստ և գլխաւորապէս մեր վերաբերմամբ—նահանջ։ Նահանջ, որովհետև նեռելով մեր ժողովուրդները նոր փորձութիւնների դիրքը, ոչ իբրև պասիւ մի մասա, այլ իբրև ակտիւ և գործունեայ և այն էլ կռուող ոյժերի մի զանգուած, մենք դրանով կատարած կը լինէինք մեր ժողովուրդների գլխին մեր պատմական սխալ և հակաքաղաքագիտական գործունէութեան մի նոր փայլուն փորձը, որը մի անդամից վերջ կը տար մեր ժողովուրդների գոյութեանը, անկասկած, դցելով նրանց խոշոր պետութիւնների դօրքերի տաքի տակ։

Մեզ մնում է միայն չէզոքութիւնը։ Մեզ մնում է միայն այն խելացի և քաղաքագիտական չէզոքութիւնը, որը փրկեց և մինչև այսօր էլ փրկում է պատերազմի ահեղ սարսափներից Շուէյցարիային, Շուեցիային, Նորվեգային, Հոլանդիային և այլ մանր պետութիւններին։

Պետութիւնը ամենամեծ հաշուարկի [illegible] այսօր էլ դալիս է մեզ ուսուցանելու ոչ թէ լոկ խօսքերով, այլ շշմեցուցիչ օրինակներով, մեր աչքի առաջ բերելով մեր մատաղ սերունդ ոչ-հեռաւոր անցեալը, որ՝ հարբած օրուայ յաղթողների ցնծութիւնով, մեր ժողովուրդների կեանքը և ապագան չի կարելի զոհ բերել անցողակի թէպէտև հզօր հեթանոսներին և այսպիսով հիմնովին քանդել և կործանել մեր տունը և հայրենի օջախը։

Եւ եթէ այսօր կայ մեզ համար մի սրբութիւն, մի նպատակ, որին ձգտում ենք, այդ մեր ժողովուրդների ֆիզիքական գոյութեան և նրանց արտասահմանեան-կուլտուրական արժէքների պահպանման խնդիրը է։

Այդ խնդիրը ևս առաւել վերաբերւում է մեզ, հայերիս—մասնաւորապէս, որովհետև այս պատերազմում մենք թէպէտ եղել ենք ամենափոքր և ամենաթոյլ ազգը, բայց կորցրել և տուժել ենք բոլորից շատ, ամենից սարսափելի վիճակի մէջ ընկնելով, և այս ամենը շնորհիւ մեր կործանիչ և անհեռատես ներքին և արտաքին քաղաքականութեան։

Անցեալի դասը պիտի մեզ համար խրատ լինի։ Միւս չէզոք պետութիւնների ներկայ վիճակը՝ մեզ օրինակ։ Եթէ ապրել ենք ուզում, եթէ զարգանալ և աճել ենք ուզում, պիտի վերջապէս հրաժարուենք անցեալի սխալ քաղաքական և կործանիչ գործերից և դալիք օրերի տենդային վրդովումներից հեռու պահենք մեզ, խոր-պապէս հաւատացած, որ որքան հեռու լինենք պայքարից, այնքան ոյժիկ կը լինենք մեր ժողովուրդների փրկութեան։

ՍՈՑԻԱԼ-ՏՍԱԿԱՆ ՄԻ ՆՈՐ ՓՈՐՁ

Թիֆլիսի քաղաքային դուման կազմել է մի օրինագիծ, որով քաղաքային վարչութիւնները տրուում է իրաւունք ստիպողաբար գնելու քաղաքի շրջանում գտնուող մասնաւոր ժարգինց պատկանող այն անշարժ կալուածները, որոնք հարկաւոր են քաղաքի այս կամ այն կարիքների համար։

Այն սկզբունքը, որի վրայ հիմնուած է այս օրինագիծը, վիճելի չէ։ Երբ հասարակական շահը, հասարակութեան կամքը ընդհանրանում է մասնաւոր շահերի, մասնաւոր կամքի հետ, դէջողը պիտի լինի այս վերջինը։

Բայց քաւական չէ, որ որևիցէ օրէնք իր հիմունքով ճշմարիտ և օգտակար լինի, անհրաժեշտ է, որ այն ոգով տարուած լինեն այդ օրէնքի էական և հիմնական տարրերը։

Սոցիալական գնման գաղափարը այդպիսի էական հարցերից մէկն է, թէ ինչ գնով և ինչ հիմունքներով է կատարւում գաւառում կալուածների գնահատութիւնը։

Գոյութիւն ունեցող օրէնսդրութիւնները այդ հարցը վճռելիս ոչխատում են դուրս գալ անհրաժշտութեան սահմաններից, ձգտում են, որ անհատի իրաւունքը չխախտուի ստուգել, քան այդ պահանջում է հասարակական շահը։

Բոլոր այդ օրէնքները տուն քաղաքութեան որոշում են, որ սեփականատէրը պէտք է ստանայ գրաւուած կալուածի փոխարէն լիակատար և արդար վարձատրութիւն և եթէ դնի մասին առաջ է գալիս վէճ, այդ վէճը վճռում են այդպիսի դէպքերի համար հատատուած առանձին յանձնաժողովներ, իսկ յաճախ—դատարանները։ Այդ ատեանների շահագրգռուած կողմերը իրաւունք ունեն տալու իրանց բացատրութիւնները, առաջ բերելու իրանց իրաւունքների ապացոյցները, որից յետոյ հարցը վճռում է այնպէս, ինչպէս վճռում է առնատրակ ամեն մի քաղաքացիական վէճ։

Եթէ Թիֆլիսի քաղաքային վարչութեան օրինագիծը օրէնքի ոյժ ստանայ, դա լինելու է վերջ յիշած կանոնից միակ բացառութիւնը։

Օրինագիծ կազմողները, խօսելով արդար և լիակատար վարձատրու-

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

թեան սկզբունքի մասին, յարմար են գտնում այն նախ յեղափոխական շրջանի ցարական ռեժիմին և կարծում են, որ այլ կերպ պիտի վերաբերուի այդ հարցին մի դեմոկրատիկ կառավարութիւն։ Մոռանում են, որ նոյն սոցիալիզմը ընդունել են իրենց օրէնսդրութեան մէջ այսպիսի դեմոկրատիկ կառավարութիւններ, ինչպէս Ֆրանսիան, Ա. գլիան և Հիւսիսային Ամերիկան։

Քաղաքային վարչութեան օրինագիծ վ գրուած կայքի վարձատրութիւնը որոշում է այն գնահատութիւնը, որը կատարել է քաղաքային վ ըչ-թիւներ քաղաքային տուրք (оцѣночный сборъ) վերցնելու համար։

Այդ գնահատութիւնը շատ յաճախ չի համապատասխանում կայքի իսկական արժէքին։ Դոյքի դինը այդ դէպքում որոշում է նրա արդիւնքով։ Մինչդեռ երկու տուն կարող են բերել միևնոյն արդիւնքը, բայց ունենալ տարբեր արժէք։

Շատ այդ գնահատութիւնները կատարում են զարբերաբար, երբեմն տասը տարին մի անգամ։ և ուրեմն քաղաքը այսօր պիտի դնի մի դոյք այն դնով, որ նա ունեցել է տասը տարի առաջ։ Վերջապէս մեր ժամանակի համար, երբ տուրքս դինը անչափ ցնցած է 6—7 տարի առաջ 10,000 ռ. գնահատած կայքը և այսօրուայ 10,000 ռուբլին շատ տարբեր և անհամաչափ մեծութիւններ են։

Ճշտ է, նոյն այդ օրինագծով սեփականատէրերին իրաւունք է տրուում օրէնքը յայտարարելու օրից երկու ամսուայ ընթացքում, խնդրել քաղաքից նոր գնահատութիւն կատարելու, բայց դրանով գործերի դրութիւնը չի փոխուի։

Բացի վերոյիշեալ պատճառներից, որ այդ օրինակ գնահատութիւնը անկարող է պարզել դոյքի իսկական արժէքը, պէտք է նաև աչքի առաջ ունենալ, որ այդ տեսակ խնդրի հետևանքը լինելու է տուրքերի չափազանց աւելանալը և ուրեմն անատէրերից շատ շատերը կը խուսափեն օգտուելու այդ իրաւունքից, որովհետև այն տարիների ընթացքում ծանրաբեռնուելու է նրանց գոյքը մեծ տուրքերով. այդ իրաւունքից կօգտուեն միայն նրանք, որոնք այն կարծիքին են, որ իրանց տունը կարող է ենթակայ լինել դատաման, իսկ այս դէպքում քաղաքային վարչութիւնը, աչքի առաջ ունենալով նոյն հանգամանքը, չի գնահատիլ կալուածքը իր իսկական արժէքով չէ որ դա կը նշանակէր գործել հակա-յեղափոխական շրջանի սեպականատէրերի մի գնով, որ աւելի պակաս է, քան դրաւուած կայքի արժէքը և անատէրերին ոչ մի հնարաւորութիւն չեն տալիս բողոքելու այդ անարդար գնահատութեան դէմ որոշ տեսակներին՝ ապացուցանելու և պահանջելու կայքի իսկական արժէքը։

Այս է այդ օրինագծի ինքնուրոյնութիւնը, այս է ան սոցիալիստական միտքը, որ դեկավարում է օրինագծի հեղինակներին։ Այդ մարդիկ կարծում են, որ դրանով մի հարուած հասցած կը լինեն մանաւոր սեփականութեան սկզբունքին։ Դրանց կարծիքով աւժողը լինելու է միայն ունաւորը։ Նա կորցնելու է իր կարողութեան կէսը, և այդ կէսը ձեռք է բերելու համայնքը։

Բայց միթէ ճշմարիտ է, որ աւժողը լինելու է միայն սեփականատէրը։

Ի՞նչ է լինելու հետևանքը, եթէ այդ օրինագիծը օրէնքի ոյժ ստանայ։

Անկասկածելի հետևանքը լինելու է այն, որ այն մարդկանցից շատերը, որոնք իրան[illegible] դարատարդում էին [illegible] երում տներ շինել [illegible], չեն տալ այլևս իրենց կապիտալին այդ տեսակ գործադրութիւն, որովհետև՝ ինչ միտք ունի դնել դրամագլուխը մի գործի մէջ, որը սովորաբար մեծ տոկոս չի տալիս, բայց ենթակայ է ռիսկի՝ կորցնելու դրամագլխի կէսը։

Գատերգմից առաջ ամեն տարի Թիֆլիսում հարիւրաւոր նոր տներ էին շինւում։ Նոյնը աւելի փոքր չափերով տեղի ունէր Վրաստանի միւս քաղաքներում և առհասարակ ընդհանուր երևոյթ է, որ քաղաքների բնակչութիւնը տարէց տարի աւելանում է և դրա հետ միասին շատանում է տների թիւը։

Հինգերորդ տարին է, որ մեր քաղաքում, կարելի է ասել, ոչ մի տուն չի շինուել։ Որքան հասկանալի է, թէ ինչ չափերով պիտի սկսուէր տների շինութիւնը առաջն հնարաւորութեան դէպքում։ Քաղաքային վարչութեան օրինագիծը պակաս է թուլացնելու այդ թափը և դրա անմիջական հետևանքը կը լինի այն, որ մենք կունենանք աւելի քիչ բնակարաններ, քան թէ պէտք է ունենայինք, իսկ սրա անխուսափելի արդիւնքը՝ նեղ բնակարաններում սեղմուած բնակչութիւն և բնակարանների թանդ թիւն։

Որքան առողջութիւնն է քայքայուելու, երբ մի փոքրիկ սենեակում իրար վրայ թափուած պիտի ապրեն մի քանի ընտանիքներ, ոմ սարսափելի պիտի լինի էլ աշխատանքի մեծ մասը տալ մի այդպիսի խղճուկ բնակարանի վարձ. ունենալը, թէ՞ արհեստաւորը, բանուորը և այլ աշխատաւորը, որի տունից միշտ խօսում են մեր սոցիալիստները։

Քաղաքը մի քանի հարիւր հազար ռուբլի կաշխատի, կէս գնով խլելով սրա կամ նրա կալուածքը, իսկ քաղաքի ամբողջ բնակչութիւնը կը վճարի առանձնապէս իր առողջութեան գնով, իր քրտնքի գնով։ Դաշնակը, որ ուղղուած է հարուստի մէջքին, անդրադառնալու է և մեծ թափով ընկնելու է աշխատաւորի գլխին։

[illegible]

Կայքերի գրաւումը յայտնի դառնալու ընդհանրութեանը և հասարակութիւնը յաճախ վկայ և ականատես է լինելու, թէ ինչպէս քաղաքային վարչութիւնը դրաւում է այս կամ այն մարդու կալուածքը, տալով նրան միայն արժէքի կէսը, յաճախ գոկուելու են իրենց ունեցածից մարդիկ, որոնք ձեռք են բերել ազնիւ աշխատանքով։ և դժուար չէ երևակայել, թէ այդ դէպքերը ինչ ազդեցութիւն պէտք է ունենան հասարակութեան հոգեբանութեան վրայ։

Մեր մէջ բաւական թոյլ զարգացում է ստացել յարգանք դէպի ուրիշի ունեցածը, ուրիշի աշխատանքը, օրէնքը պիտի նպաստի այդ յարգանքի, այդ զգացմունքի զարգացմանը և ուժեղացմանը և ոչ թէ դայ կազմալուծելու հասարակութեան բարքերը։

Ես կուզենայի ուշադրութիւն դարձնել և մի այլ հանգամանքի վրայ։

Յայտնի է, որ Թիֆլիս քաղաքի բնակչութեան մեծամասնութիւնը կազմում են հայերը։ Նոյն երևոյթը տեղի ունի և Թիֆլ. նահ. միւս քաղաքներում՝ Գորին, Սղնախը, թեև այդ հայաշատ քաղաքներ են, այդ քաղաքներում թէ սեփականատէրերը և թէ աշխատաւորութիւնը բաղկացած է ըստ մեծի մասին հայերից։

Մեր կուսակցութիւններից մէկը, այն է՝ Դաշնակցութիւնը, երբ դիմում է հայ հասարակութեան նրա քուէները ստանալու համար, սիրում է ասել, որ նա պաշտպանում է հայութեան շահերը։

Բայց երբ հարկաւոր է լինում ցոյց տալ, որ Դաշնակցութիւնը, ամենաղուտ սոցիալիստական կուսակցութիւն է, յաճախ նա ոտակ է տալիս նոյն հայութեան շահերը։ Դրա ապացոյցներից մէկն է և վերև յիշած օրինագիծը։

Այդ օրինագիծը կրում է և քաղաքային վարչութեան անդամ դաշնակցական «ընկերների» ստորագրութիւնը։ Այդ օրինագիծը դումայում նախնական ընթերցման ժամանակ արժանացաւ դումայի [illegible] ական ֆրակցիայի հատ[illegible]նութեանը։

Ընթերցող հասարակութեանն ենք թողնում դատելու, թէ որքան արդար են այդ «սոցիալիստները», երբ պնդում են, որ նրանք են հայութեան պաշտպանները։

Ա. Բարխուդարեան

ՕՏԱՐԻՆ ԱԶՔ ՏՆԿԱԾ ՁԻՆԸ*

(Տաճկահայ թերթերից)

Մեր պաշտօնակիցը «Ժամանակ» իր կիրակի օրուան թիւին մէջ հրատարակած էր Տիլիկեան իշխանութեան շրջանին վերաբերեալ պատմական դրուագ մը, որ թէև օրթը դար առաջ տեղի ունեցած դէպքի մը շուրջը կը դառնայ, բայց սխալ մեկնութիւններու տեղի տալու բնոյթ ունենալուն համար կուզինք մէկ քանի խօսք ըսել այս առթիւ։

«Ժամանակ»-ի յօդուածագիր, Փիլիպէոսեան էֆ. անուշը միամտաբար գրած է իւր յօդուածը, բայց արդի ժամանակներուն մէջ տեղի չկար կարծենք ի վեր հանելու դէպք մը որ արդէն անցողակի հանգամանք ունեցեր է։ Հենրիկոս Զ., Գերմանիոյ կայսրը թագ և մական դրկեր է եղեր Տիլիկիոյ իշխան Լևոն Բ.-ի, ի վարձանոր ծառայութեան խաչակիր գերման բանակին։ Ասիկա անցած դացած դէպք մըն է, և որևէ հետևանք չէ ունեցած։ Բայց և այնպէս անոր յիշատակումը կրնայ, ինչպէս ըսինք, սխալ մեկնութիւններու տեղի տալ, և անախորժ կասկածներ յառաջ բերել։

Գերմանիա այսօր Թուրքիոյ գինակիցն է։ Իբր օսմանցի և հայ ուրախ ենք այս մասին։ Կը հիանանք գերման ոյժին, հանճարին, կազմակերպութեան, գրականութեան, ճարտարարուեստին և նախաձեռնարկ ոգիին վրայ, որոնց փառաւոր արդիւնքներ տեսնուեցան արդի պատերազմի մէջ։ Շատ փափաքող ենք օգտուելու գերման միաքէն, կրթութենէն, դպրոցա-

*) Կարևոր ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին տաճկահայ «Բիւզանդիոն» թերթի (№ 6634) գաղափարքի հետ, որը ցոյց է տալիս մեր տաճկահայ եղբայրների ներկայ քաղաքական մտմենտի ընթացումը և այն պարտաւորութիւնները, որ նրանց կարծիքով ունի Նորակազմ Հայաստանի հանրապետութեան կառավարութիւնը հայ ազգի Ներկայացուցիչների հանդէպ թէ իր երկրում և թէ հարևան տաճկական պետութեան մէջ։ (Խմբ)

*) «Коровья смерть» «Безъ анексій и контрибуцій» և «Безъ Царя» վերնագիրներով։

ՌՈՒՍ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱԼՔԻՄԻԿՈՍՆԵՐԻՑ ՄԷԿԸ

Տեղական «Борьба» լրագրի 141, 146 և 151 համարներում նրա մշտական աշխատ. В. Войтинскій-ն զետեղել է «Власть тьмы» ընդհանուր խորագրի տակ երեք յօդուած*) որոնց մասով չի կարող տարբերուիլ մտորումների անցնել նա, ով յօշոտուած, բայց և քաղաքականապէս ապրելու սրբազան կամքն ունեցող հայ ժողովրդի դատի անունից հաշուի է կանչում Ռուսաստանի յեղափոխութեան բոլոր գործօններին և պահանջում նրանցից պատասխան այրող հարցերին— ի՞նչու այսպէս եղաւ և ինչ պիտի լինի։

Ինչու Եւրոպայի և Ամերիկայի իմպերիալիզմին և նրա հրդեհած համաշխարհային պատերազմին ամենապատնեշող ռուս յեղափոխական դեմոկրատիան այդպէս անփառունակ մեկուսացաւ և տնմիջոցներ խաղաղութեան փոխարէն իր հայրենիքի համար կազմակերպեց քաղաքական սարկութեան շրջան և ժողովրդի բոլոր կենսական ոյժերը հիւծ ղ անարիա։

Ինչու ռուս յեղափոխական զորքը փոխանակ Սանկտ-Պետերբուրգի հասցրեց երկիրը մինչև Բրեստ-Լիտովսկ, իսկ հայ ժողովուրդը—մինչև Բ-թում և Տրապիզոն։

Ինչու փոխանակ Տաճկահայաստանի ի քնորոշման տուեց մեզ Եւրանի հանրապետութիւնը...

В. Войтинскій-ն, ճիշտ է, ոչ հեստաքրքրուում է մեզ այրող հարցերի էութեամբ և ոչ էլ խնդիրը դնում է այդքան լայն ծաւալով։ Նա միայն իբրև կենդանի վկայ տալիս է մի շարք ցոյցաւոր պատկերներ թիկունքից և ռազմի դաշտից, որտեղ ռուս «յեղափոխական» զօրքը գործնականապէս կեանքի էր վերածում «առանց անեկսիայի և կոնտրիբուցիայի» դեմոկրատական լոզունգը և իր բացատրութիւններն է տալիս այն պատճառների, որոնք «յեղափոխական» կոչուած զօրքը դարձրին նոյն այդ յեղափոխութեան գերեզմանափորը։

Բայց յեղափոխութեան վերադնահատման տեսակէտից այդ յօդուածները կրկնակի արժէք են ներկայացնում ոչ միայն իրենց փաստացի բովանդակութեամբ, այլև հեղինակի անձաւորութեամբ։

В. «Войтинскій-ն յեղափոխութեան զարգացման ոչ միայն կողմնապահ տրող է, այլև ակտիւ մասնակից։ Նա, որքան մեզ յայտնի է, այն բազմաթիւ «զեկավարներից» մէկն է, որ կանգնած լինելով շարժման կենտրոնում, հենց առաջին օրուանից «կազմակերպում» էր յեղափոխութիւնը, իբրև Գեորգրադի Բանուորական և Զինուորական Խորհրդի գործադիր մարմին և նոյնիսկ բիւրոյի պատասխանատու անդամ։ Նա, որքան մենք գիտենք, Խորհրդի պաշտօնական օրգան «Известія»-ի այն վեց պատասխանատու խմբագիրներից մէկն էր, որ զեկավարում էր դեմոկրատիայի մտքը և խորացնում «մասսաների մէջ» առանց անեկսիայի ու կոնտրիբուցիայի» և յարակից լոզունգները, որոնց սրբագործման ցնցող պատկերները այժմ նա տալիս է իւր ընթերցողներին այնքան եղակի անկեղծութեամբ։ Նա իբրև հիւսիսային ֆրոնտի կոմիսարի օգնական և յեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցիչ հեղինակաւոր վկայ է Ռիգայի անկման և վերջապէս իբրև մեր շնիկ նա կրում է պատասխանատուութիւնը այն տակտիկայի, որ մինչև հոկտեմբերեան յեղաշրջումը վարում էր մենշևիզմը իբրև շարժման և դիրքի միակ տէրը, այն «կիսալենինական»-ն տակտիկայի, որ վիժեցրեց յեղափոխութիւնը։

Հասկանք, ուրեմն, այսպիսի մի հեղինակաւոր վկայից, երբ նա տանում է մեզ մի շարք միտինգներ, որտեղ Խորհրդի ձեռակերպած լոզունգներին ևս տալիս է յեղափ խական զօրքի սանկցիա և ապարդ և ամբողջ դեմոկրատիայի զեկավարող սկզբունք իւր օրգանի և կազմակերպութիւնների միջոցով դարձնում է ամբողջ աշխարհի սեփականութիւն, Ռուսաստանի, ինչպէս նաև մեր «ծայրագաւառի» յեղափոխական վարքի առաջնորդող գիծ։ Լաւնք նրան, երբ նա գնահատում է զեղեցիկ լոզունգների և ճնշագործ պրակտիկայի փոխադարձութիւնները, թէև երբէք չհամաձայնի այդ գնահատութեան հետ, որովհետև մեզ համար կրկնակի խրատական պիտի լինի ոչ այնքան «խաւարի իշխանութեան» ճիրաններում թաւալուող մասսայի ինքնին հասկանալի անկարողութիւնը, որքան նրան զեկավարող և նրա գլխից մարդիկ, որոնք ձեռք են բերել ազնիւ աշխատանքով։ և դժուար չէ երևակայել, թէ այդ դէպքերը ինչ ազդեցութիւն պէտք է ունենան հասարակութեան հոգեբանութեան վրայ։

Մեր մէջ բաւական թոյլ զարգացում է ստացել յարգանք դէպի ուրիշի ունեցածը, ուրիշի աշխատանքը, օրէնքը պիտի նպաստի այդ յարգանքի, այդ զգացմունքի զարգացմանը և ուժեղացմանը և ոչ թէ դայ կազմալուծելու հասարակութեան բարքերը։

Ես կուզենայի ուշադրութիւն դարձնել և մի այլ հանգամանքի վրայ։

Յայտնի է, որ Թիֆլիս քաղաքի բնակչութեան մեծամասնութիւնը կազմում են հայերը։ Նոյն երևոյթը տեղի ունի և Թիֆլ. նահ. միւս քաղաքներում՝ Գորին, Սղնախը, թեև այդ հայաշատ քաղաքներ են, այդ քաղաքներում թէ սեփականատէրերը և թէ աշխատաւորութիւնը բաղկացած է ըստ մեծի մասին հայերից։

Մեր կուսակցութիւններից մէկը, այն է՝ Դաշնակցութիւնը, երբ դիմում է հայ հասարակութեան նրա քուէները ստանալու համար, սիրում է ասել, որ նա պաշտպանում է հայութեան շահերը։

Բայց երբ հարկաւոր է լինում ցոյց տալ, որ Դաշնակցութիւնը, ամենաղուտ սոցիալիստական կուսակցութիւն է, յաճախ նա ոտակ է տալիս նոյն հայութեան շահերը։ Դրա ապացոյցներից մէկն է և վերև յիշած օրինագիծը։

Այդ օրինագիծը կրում է և քաղաքային վարչութեան անդամ դաշնակցական «ընկերների» ստորագրութիւնը։ Այդ օրինագիծը դումայում նախնական ընթերցման ժամանակ արժանացաւ դումայի [illegible] ական ֆրակցիայի հատ[illegible]նութեանը։

Ընթերցող հասարակութեանն ենք թողնում դատելու, թէ որքան արդար են այդ «սոցիալիստները», երբ պնդում են, որ նրանք են հայութեան պաշտպանները։

Ա. Բարխուդարեան

անունից ժողովրդի և երկրի բաղդը անօրինող քաղաքական գործչի յուսահատական կուրութիւնը։

* * *

Ահա ձեզ Ֆինլանդիայի Խորհրդների շրջանային համագումարը, որ Գեորգրադից եկել է և Войтинскій-ն իբրև Խորհրդի ներկայացուցիչ «անցկացնելու» այնպիսի մի կարևոր բեղուցիա, ինչպիսին էր յեղափոխութեան սկզբնական շրջանում «կօալիցիոն» կառավարութիւնը։ Գեորգրադի գարնիզոնը, որ ձեռք էր բերել Թիկունքում Մաղու մենաշնորհն, դէնքը ձեռքին պահանջում էր Մրի կով և նման բուրժուաների վանումը կառավարութիւնից և Սկոբելևի քեռնով յայտարարում էր, որ յեղափոխական զօրքս մի կաթիլ արիւն անգամ չի թափիլ նրա իմպերիալիստական քաղաքականութեան համար, քանի որ ընդունել է «առանց անեկսիայի և կոնտրիբուցիայի» լոզունգը։

Դահլիճը—ի հարկէ յեղափոխական, կարմիր դրօշակներ, Մարքսի ծաղկաղարդ բնորոշ պատկեր իւր շեշտակի և յարգալից երկիւղածութիւն ներշնչող հայեացքով։ Խօսք է առնում մի զինուոր, մի, ըստ երևոյթին օրօղնիկ, մի կաշվեայ, որի ամբողջ դնուորական սատը հենց նրա շի էլն է։ մի յաղթանդամ, լայնաժպիտ և վառվռուն աչքերով մարդիկ, մի տիպիկ դեղերտիր, որի կենսուրախութիւնը հաւասար է նրա յանդգնութեան։

—«Ես ձեզ ամեն ինչ կը բացատրեմ, եղբայրներ,—սկսում է իւր հառը դեղերտիրը։ Ես իրան, հենց պ. մինիստր Սկոբելևի հետ եմ խօսել։ Ես գիւղացի եմ, ես փչացած մարդ չեմ։ հենց որ եկայ Պիտեր, ուղղակի գնացի մինիստրների մօտ, գտայ մինիստր Սկոբելևին և դուզնագուղը դիմեցի նրան։ «Ինչու էք բուրժուազիային մօտ թողնում։ աւելի լաւ է մինիստրութեան կանչել գիւղացիներին։ գիւղացի քրիստոնեաները աւելի լաւ պիտի իմանան, թէ մինչ է հարկաւոր ժողովրդին»։ իսկ պ. մինիս. Սկոբելևն ինձ ասում է։ դու, Սերգէյ, ուզիղ ես ասում։ գիւղացին քաղաքացուց աւելի լաւ է հասկանում։ բայց մի դժբաղդութիւն կայ։ Սիրդուած եմ ամեն տեսակ կառավարութիւնների հետ խօսել։ դերմանական Թագաւորի հետ գերմաներէն, ֆրանսիական հետ—ֆրանսերէն, «անգլիչանկոյի» հետ անգլերէն։ նրանք մեր լեզուն չգիտեն։ այ, դու, Սերգէյ, խելօք մարդ ես, բայց միայն ռուսերէն ես խօսում։ ես էլ, մերոնք էլ նոյնպէս միայն ռուսերէն ենք խօսում։ ահա դրա համար էլ վերցրինք Միլիւկովին, որ նա օտարների հետ խօսի։ նա գիտուն մարդ է, բոլոր լեզուները գիտէ։ Ահա այստեղ էլ ես հասկացայ—ճառում է Սերգէյը,—ուրեմն մենք առանց բուրժուազիայի»... ուրեմն կեցցէ կօալիցիոն կառավարութիւնը։

Войтинскій-ն շարունակում է ի նարկէ Գեորգրադ իր տարած յաջթանակի գիտակցութեամբ հաղորդելու «Известія»-ի էջերից աշխարհին «յեղափոխական բանակի մի զորագնդի» ռեզոլիցիան, այն զորագնդի, որ դրանից մի երկու ամիս

կան լաւ կազմակերպութիւններէն։ Հարիւրաւոր թուրք ուսանողներ այսօր կը հետևին գերման վարժարաններու ընթացքին, և յոյս ունինք մօտերս անոնց մէջ տեսնելու Հայ ուսանողներ։ Բայց երբ կը հիանանք անվերապահօրէն գերման միտքին և հնաբիմացութեանը վրայ, մարդկային գործունէութեան ամեն մարզերուն մէջ, ասիկա երբէք չի նշանակեր որ մենք, Թուրքիոյ հայերս, քաղաքական ակնկալութիւն մը ունինք Գերմանիայէն։ Կը փափաքինք օգտուիլ Գերմանիայէն մասնորապէս և առևտրապէս, ինչպէս օգտուեր ենք ուրիշ երկիրներէ, և մեր քաղաք գրդիւնքներուն մասնակից ըլլար ենք նաև այս գեղեցիկ երկիրը։ Բայց գալով քաղաքականութեան, ատոր հետ մենք կապ ունենալ չենք ուզեր։ Անիկա երկրին վարիչներուն կը վերաբերի, և անոնց անկ է կարգադրել երկրին քաղաքական յարաբերութիւնները Գերմանիոյ, ինչպէս ուրիշ երկիրներու հետ։

Հարկ կայ արդեօք դարձեալ շեշտելու թէ մեր դիրքը փափուկ է այսօր ամեն ժամանակէ աւելի։ Տակաւին շատ մօտ անցեալ մը ունինք, տխուր դէպքերով լեցուն, որոնց վերյիշումն անգամ սիրտերնիս կարիւնոտէ։ Անցեալ մը, արդիւնք քաղաքական ահաւոր մեքենայութիւններու, սանդրանքներու և գրգռութիւններու, որոնց անմեղ զոհերը հանդիսացան բիւրաւորներ։ Մենք կուզենք այս ամենը մոռացութեան տալ, և անգամ մըն ալ չկրկնել միևնոյն սխալներուն մէջ, որովհետև այս անգամ սխալ քայլ մը, ազգին վճռացումը պիտի ըլլայ։ Նայինք որ անցեալին վերքերը դարմանենք։ Ասիկա տաժանագին աշխատութիւն մըն է ինքնին, և մեծ իմաստութիւն և խոհականութիւն կը պահանջէ։ Այս մասին մեր առաջին գործը պէտք ըլլայ զգուշանալ, հեռու մնալ այնպիսի արտայայտութիւններէ որ կրնան սխալ մեկնուիլ, և այնպէս թարգմանուիլ որ մենք, Թուրքիոյ Հայերս օտարին աչք անկեր ենք, օտարէն բարիք կակնկալենք, կամ թէ, բացէ ի բաց ըսենք, կուզենք

յեռոյ պիտի սեղծի Ֆիքորդի բաղանիքը և իր ոճրագործ ձեռքերը շաղախի գեներալների և օֆիցերներու անմեղ արիւնով միայն նրա համար, որ նրանք Սերգէևների վերաբերմամբ ճանաչուելու են «հակայեղափոխականներ»...

***

Ահա ձեզ Բալթեան նաւատորմիղի համագումարը, որտեղ օրակարգի խնդիրներից մէկն էլ պատերազմի նպատակն է և «առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի» լոզունգը։

Այս անգամ ամբիոնի վրայ է ե բիտասարդ, կայտառ, խրշագոյն և ջղային, բայց գեղեցիկ դէմքով մի մատրոս։ Նա ընդունում է «առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի» լոզունգը, բայց չնայելով դրան, կամ աւելի ճիշտը, հենց այդ պատճառով էլ, նա բողոքի շանթեր է որձակում Պետրոգրադի Խորհրդի դէմ յանձին նրա ներկայացուցիչ Войтинск-ու. «Մենք վաղուց գիտենք, որտեղում է «յեղափոխական» մատրոսը—մենք վաղուց գիտենք ձեր քաղաքականութիւնը. մենք պահանջում էինք, որ դուք մատրոսներին հաւատարեցնէիք օֆիցերներիս. որքան նրանց էիք վճարում, վճարէիք և մեզ։ Ամենին մինիստրն եկել էր—ասում էր փող չկայ. մենք այդ պովոկացիային չենք հաւատում. մենք գիտենք որտեղ են փողերը թաքնուած. նրանք Մոսկուայումն են, Սուխարևկայ բաշնիայում. այնտեղ պարկերի մէջ 200 միլիարդ ոսկի կայ. պատերազմից առաջ հաւաքել էին, որ ինչ է 20 տարի պատերազմը չարունակեն. իսկ որովհետև ժողովուրդը հիմա այլևս պատերազ

որ այստեղ ալ մեզի յատուկ իշխանութիւն ունենանք։

Իրաւ է թէ պէտք չունինք ըսելու որ Թուրքիոյ Հայերուն միտքէն բնաւ այդ տեսակ բան մը չանցնիր, բայց նորէն կը կրկնենք, մեր դիրքը փափուկ է, մեր Թուրք հայրենակիցները իրաց բերմամբ շատ դիւրազգած եղած են, և մեր կողմէ, առանց կշռուելու, առանց հետևանքն ի նկատ առնելու ըսուած խօսքեր, եղած արտայայտութիւններ, ոչ միայն լրագրութեան, այլ և պարզ խօսակցութիւններու մէջ, կրնան բոլորովին անյուսալի մեկնութիւններու տեղի տալ, թէ ամբողջ Թուրքիոյ Հայերուն փափաքն են անոնք։ Մինչդեռ մեր անխախտ քաղաքականութիւնն է բարեկամաբար ապրիլ մեր Թուրք հայրենակիցներուն հետ, անոնց հետ աշխատիլ, անոնց օգնել և փոխադարձաբար անոնց է օգտուիլ, և մեր բարիքը, բարգաւաճումը և աշխատութիւններուն վարձատրութիւնը ապահովել Օսմ. կառավարութենէն։

Թուրքիոյ Հայերուն անշեղ ուղղութիւնն է ասիկա։ Օտարին հետ կապ չունինք, օտարէն քաղաքական բարիք չենք ակնկալեր։

Այսօր, շնորհիւ Թուրքիոյ բարեացակամութեան, Հայկական Հանրապետութիւն մը կազմուած է Կովկասի մէջ։ Իրը ազգակից և կրօնակից, կ'հետաքրքրուինք անով ի հեռուստ, ասիկա պարզ մարդկային զգացումի խնդիր է։ բայց անոր հետ ալ քաղաքական չենք կապ չունենք, և ինչպէս ուրիշ անգամ ալ շեշտեցինք, անքան համակիր պիտի ըլլանք անոր, որքան անիկայ մեզ բարեկամ Թուրքիոյ և տեղտալի ուղղութեամբ մը դժուարութեան չմատնէ մեզի։

Արդ երբ նոյն իսկ Հայկական Հանրապետութեան հետ չենք ուզեր ունենալ քաղաքական համարտիկ կապ, բնականաբար ուրիշ օտար երկիրներու հետ ալ քաղաքական յարաբերութիւն չենք ունենար։ Մեր քաղաքականութիւնը մեր երկրին, Թուրքիոյ քաղաքականութիւնն է. մենք անոր զաւակները, անոր քաղաքացիներն ենք։ Ու մեր մեծագոյն, անկեղծ փափաքն այն է որ

մեղ չի ուզում եւ հաստուրիւն առանց անեքսիայի եւ կոնտրիբուցիայի—այդ պատճառով էլ մեր կարծիքն է, որ փոդերը հանեմ Սուխարեւկայից, այն ժամանակ ամենքին էլ կը բաւէ...

— Ճիշտ է, գոռում է ամբողջ դահլիճը։

Войтинскій-ն փորձում է հերքել 200 միլիարդի առասպելը. փորձում է բացատրել որ այդքան ոսկի ամբողջ եկրոպայի վրայ անգամ չի կարելի գտնել, ուր մնաց Սուխարևկայում. բայց ապարդիւն փորձառութիւնը բողոքում է, հեգնում է, բայց ի հարկէ ընդունում է «առանց անեքսիայի ու կոնտրիբուցիայի» ֆորմուլան, որ Войтинскій-ն շարադրում է արձանագրել իր թերթում իբրև մի նոր նուաճումն յեղափոխական դեմոկրատիայի ընդդէմ հակահարձակման իմպերիալիզմի...

***

Բայց ահա ձեզ և «կարմիր» սոցիալիստական Կրոնշտատը, որ այնքան երկար ժամանակ իր «յեղափոխական» կամքն էր թելադրում ամբողջ Ռուսաստանին և գերութեան մէջ պահում իրեն դեմոկրատիայի միակ և լիազօր ներկայացուցիչ համարող Պետրոգրադի Բանս. և Զին. Խորհուրդը։

«Առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի» կախարդիչ խօսքեր։

Հետաքրքիր, ինչպէս և վայել է դիտակից դեմոկրատիայի որդոնին, մի շինչ հագած Սերդէև չէ. մաքուր պիջակով, բեխերը բարձրացրած մի պճնազարդ երիտասարդ է, որ դեմում է միտինգին.

«Ընկերներ, ձեր փառքը որտեղում է ամբողջ աշխարհում. թագաւորներն իրենց գահերի վրայ, իսկ բանկիրներն իրենց ոսկու ամբարներում դողում են լսելով կարմիր Կրոնշտատի անունը։ Ճիշտ եմ ասում, ընկերներ։

— Ճիշտ է։

— Դուք առաջապահ գունդն էք համաշխարհային յեղափոխութեան և դուք բարձրաձայն յայտարարեցիք, որ մեզ հաքկաւոր է «հաշտութիւն առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի»։ Գերմանացիք մեր եղբայրներն են, իսկ մեր թշնամիները—անգլիական և ֆրանսիական կապիտալիստներն... Դող մեր գերմանացի ընկերներն իմանան, որ կարմիր Կրոնշտատը մինչև վերջը կը կատարի իւր յեղափոխական պարտքը... Թող ամբողջ աշխարհն իմանայ, որ գերմանացի եղբայրների ժամանակ Կրոնշտատի մարտիկներն իրենց երակը պատրաստ են թափելու։ Պետրոգրադի բուրժուազիայի դէմ

— Ճիշտ է։

— Կեցցէ հաշտութիւնը առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի... որտեղում է ամբողջ միտինգը այն ժամանակ, երբ Գերմանիան արդէն իրապէս յամրաքայլ. բայց յամառօրէն ժառեռում է Ռիգային և անմիջական ապառնալիքի առակ դնում Կրոնշտատի պաշտպանութեան ապաւինած մայրաքաղաքը իւր դեմոկրատիայով։

Ալ'պեան

(Կը շարունակուի)

ԼՈՒՅՍԳԻՐՆԵՐ

Հանրագրեր

ՄՈՍԿՈՒԱ. Բոլորին, բոլորին և Ցարսկոյէ Սելօ։ Մահափորձ ժողովրդական կոմիսարների նախագահ Ուլիանով Լենինի դէմ։ Պաշտօնական։ Բիւլլետէն, ցերեկ. ժ. 6 և կէս։ Զարկերակը՝ 112, տաքութիւնը՝ 37, հիւանդն իրեն առոյգ է զգում։ Արիւնհոսութիւնը կրծքի շարքում չի շատանում։ Մասնագիտութիւններ բժիշկների՝ Սիմաշկօ, Վէյսբրուտ և Օբուխ։

Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վ. Ի. Ուլեանով—Լենինի մահափորձի առթիւ համառուսական արտակարգ յանձնաժողովի կողմից։ Տեղեկանալով ժողովրդական կոմիսարների նախագահի վրայ կատարուած մահափորձի մասին, յանձնաժողովն անմիջապէս միջոցներ ձեռք առաւ մահափորձի յանցաւորներին գտնելու համար։ Շնորհիւ ձեռք առած եռանդուն միջոցների յաջողուեց բռնատարկել մի քանի մարդու, ի թիւս որոնց և Լենինի վրայ կրակող կնոջը, որը հաստատում է յայտնել իր ազգանունը։ Սակայն յաջողուեց պարզել, որ մահափորձ կատարողը սոցիալիստ յեղափոխական է։ Յանձնաժողովի ձեռքին տուեալներ կան, որ ցոյց են տալիս, թէ մահափորձ անողը կապ ունի կազմակերպութեան (բացէ Թղթ.), որը նախապատրաստել է մահափորձը։ Այդ ուղղութեամբ կատարուող եռանդուն քննութիւնները պարզեցին, որ մահափորձը կապ ունի Սամարայի կազմակերպութեան հետ։ Ի տ. նախագահի Պետերս։

Կ. Գ. Կ. Տպագրական բիւրոյի բիւլլետէններ. (շարունակութիւն). Մրթինգներում և ժողովներում, որոնք այժմ հոգուոգիւտ դէպքեր չեն, կազմակերը դժգոհութիւն են յայտնում իրենց հրամանատարութեան դէմ, որը նրանց եղբայրասպան կռուի է հանել։

Պետրոգրադում նոր սպանութիւն է կատարուել. անկիւնից դիդկահարուած է Խորհրդի ամենատարեց գործիչներից մէկը՝ Հուսխատի շրջանի ներքին գործերի կոմիսար Ուրից լն։ Սպանողը սոց.-յեղափխական է, պոլիտ խնիկումի ուսանող, արտիլերիական ուսումնարանի նախկին իւնկեր, սոցիալիստ-իմպերիալիստների մի խմբակի նախագահ։

ՄՈՍԿՈՒԱ, օգոստ. 31 ին։ Սպանողը (*) բռնատարկուած է Պետրոգրադի անգլիական ակումբի շէնքում։

Մոսկուայում երէկուայ, դուարբուած միտինգում, Մոսկուայի պրոլետարիատը արժանաւոր կերպով պատասխանեց խելացնորած հակայեղափոխութեան կատարած սպանութեան։ Ասկինից կատարուած նոր փորձը խորհրդի իշխանութեանը հարուած հասցնելու համար, հերթի դրեց գործադրելու պրոլետարիատի դաժան դիկտատուրան բուրժուազիայի դէմ և անողոք կռիւ մղելու դաւաճանների հետ, այնպէս որ ամբողջ բուրժուազիան և նրա համախոհները դողան սարսափի առաջ։

Մոսկուայում հակայական հակայեղափոխական դաւադրութեան բացման առթիւ բռնատարկուած են 100 ից աւելի մարդ։ Փաստաթղթերից երևում է, որ սպիտակգուարդիականները անգլո-ֆրանսիական կառավարութեան գործակալներից մեծ գումարներ են ստացել։ Կազմակերպութիւնը կապ է ունեցել ոչ էս էրների հետ։

Պաշտօնական բիւլլետէն Լենինի առողջութեան մասին. 31 օգոստոսի 7 ժամին. Զարկերակը՝ 107, տաքութիւնը՝ 36,9, շնչառութիւնը՝ 22 ընդհանուր դրութիւնը և ինքնազգացումը լաւ է։ Անմիջական վտանգն անցած է, բարդութիւններ դեռ ևս չկան։ Բժիշկ պրոֆեսորներ՝ Մինց, Ռոզանով, Վինոգրադով, Վէյսբրուտ, Սեմաշկօ, Բարանով, Բոնչ-Բրուևիչ, Օբուխ։ Ժողովրդական կոմիսարների խորհրդի գործերի վարիչ՝ Վլադ. Բոնչ-Բրուևիչ։

Պաշտօնական բիւլլետէն Լենինի առողջութեան մասին, 31 օգոստոս, ժամը 12 ին։ Քնում է հանգիստ, փոքրիկ ընդհատումներով,

Արիւնհոսութիւնը կրծքի մաշկում (плевра) չի շատանում։ Բժիշկներ՝ Գ. Սեմաշկօ, Բ. Վէյսբրուտ, Վ. Օբուխ։

Բոլորին և Ցարսկոյէ Սելօ։ Պաշտօնական բիւլլետէն ժողովրդական կոմիսարների նախագահ Ուլիանով-Լենինի առողջութեան մասին։ Տաքութիւնը՝ 36 3, շնչառութիւնը՝ 26, զարկերակը՝ 110—120, գիշերը քնում է ընդհատումներով։ Ինքնազգացումը լաւ է։ Արիւնհոսութիւնը կրծքի մաշկում (плевра) չի զարգանում։ Ընդհ. դրութիւնը լաւ է։

ՄՈՍԿՈՒԱ. Կ. Գ. Կ. Տպագրական բիւրոյի բիւլլետէններ։ Պաշտօնական բիւլլետէն Վ. Ուլիանով—Լենինի առողջութեան մասին։ Գրասենեակի 31 ը ցերեկուայ 12 ժամին։ Զարկերակը՝ 112, տաքութիւնը՝ 37, հիւանդն իրեն առոյգ է զգում։ Արիւնհոսութիւնը կրծքի շարքում չի շատանում։ Մասնագիտութիւններ բժիշկների՝ Սիմաշկօ, Վէյսբրուտ և Օբուխ։

Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վ. Ի. Ուլեանով—Լենինի մահափորձի առթիւ համառուսական արտակարգ յանձնաժողովի կողմից։ Տեղեկանալով ժողովրդական կոմիսարների նախագահի վրայ կատարուած մահափորձի մասին, յանձնաժողովն անմիջապէս միջոցներ ձեռք առաւ մահափորձի յանցաւորներին գտնելու համար։ Շնորհիւ ձեռք առած եռանդուն միջոցների յաջողուեց բռնատարկել մի քանի մարդու, ի թիւս որոնց և Լենինի վրայ կրակող կնոջը, որը հաստատում է յայտնել իր ազգանունը։ Սակայն յաջողուեց պարզել, որ մահափորձ կատարողը սոցիալիստ յեղափոխական է։ Յանձնաժողովի ձեռքին տուեալներ կան, որ ցոյց են տալիս, թէ մահափորձ անողը կապ ունի կազմակերպութեան (բացէ Թղթ.), որը նախապատրաստել է մահափորձը։ Այդ ուղղութեամբ կատարուող եռանդուն քննութիւնները պարզեցին, որ մահափորձը կապ ունի Սամարայի կազմակերպութեան հետ։ Ի տ. նախագահի Պետերս։

Կ. Գ. Կ. Տպագրական բիւրոյի բիւլլետէններ. (շարունակութիւն). Մրթինգներում և ժողովներում, որոնք այժմ հոգուոգիւտ դէպքեր չեն, կազմակերը դժգոհութիւն են յայտնում իրենց հրամանատարութեան դէմ, որը նրանց եղբայրասպան կռուի է հանել։

Պետրոգրադում նոր սպանութիւն է կատարուել. անկիւնից դիդկահարուած է Խորհրդի ամենատարեց գործիչներից մէկը՝ Հուսխատի շրջանի ներքին գործերի կոմիսար Ուրից լն։ Սպանողը սոց.-յեղափխական է, պոլիտ խնիկումի ուսանող, արտիլերիական ուսումնարանի նախկին իւնկեր, սոցիալիստ-իմպերիալիստների մի խմբակի նախագահ։

ՄՈՍԿՈՒԱ, օգոստ. 31 ին։ Սպանողը (*) բռնատարկուած է Պետրոգրադի անգլիական ակումբի շէնքում։

Մոսկուայում երէկուայ, դուարբուած միտինգում, Մոսկուայի պրոլետարիատը արժանաւոր կերպով պատասխանեց խելացնորած հակայեղափոխութեան կատարած սպանութեան։ Ասկինից կատարուած նոր փորձը խորհրդի իշխանութեանը հարուած հասցնելու համար, հերթի դրեց գործադրելու պրոլետարիատի դաժան դիկտատուրան բուրժուազիայի դէմ և անողոք կռիւ մղելու դաւաճանների հետ, այնպէս որ ամբողջ բուրժուազիան և նրա համախոհները դողան սարսափի առաջ։

Մոսկուայում հակայական հակայեղափոխական դաւադրութեան բացման առթիւ բռնատարկուած են 100 ից աւելի մարդ։ Փաստաթղթերից երևում է, որ սպիտակգուարդիականները անգլո-ֆրանսիական կառավարութեան գործակալներից մեծ գումարներ են ստացել։ Կազմակերպութիւնը կապ է ունեցել ոչ էս էրների հետ։

Պաշտօնական բիւլլետէն Լենինի առողջութեան մասին. 31 օգոստոսի 7 ժամին. Զարկերակը՝ 107, տաքութիւնը՝ 36,9, շնչառութիւնը՝ 22 ընդհանուր դրութիւնը և ինքնազգացումը լաւ է։ Անմիջական վտանգն անցած է, բարդութիւններ դեռ ևս չկան։ Բժիշկ պրոֆեսորներ՝ Մինց, Ռոզանով, Վինոգրադով, Վէյսբրուտ, Սեմաշկօ, Բարանով, Բոնչ-Բրուևիչ, Օբուխ։ Ժողովրդական կոմիսարների խորհրդի գործերի վարիչ՝ Վլադ. Բոնչ-Բրուևիչ։

Պաշտօնական բիւլլետէն Լենինի առողջութեան մասին, 31 օգոստոս, ժամը 12 ին։ Քնում է հանգիստ, փոքրիկ ընդհատումներով,

դրկիրանը՝ 104, շնչառութիւնը՝ 22, ապրութիւնը՝ 36,7.

ՄՈՍԿՈՒԱ, 31 օգոստոսի.—Ուլալի շրջանի կառավարութիւնը գրգռահարել է խորհուրդների կենտրոնական կառավարութեան պատասխանատուութեան անդամ Նեուսիրովին։ Մի քանի համազարկերից յետոյ Նեուսիրովը դեռ ևս ուժ է զգացել զսպելու. հակոյթ խորհրդային հասարակապետութիւնը։ Կռուում կողոպտանները շատացել են։ Քաղաքի հենց կենտրոնում կողոպտում և սպանում են անցորդներին և բռնաբարում են կանանց։

ՄՈՍԿՈՒԱ, 31 օգոստոսի. Կ.Գ.Գ. ապագայական բիւրոյի հաղորդագրութիւնները մատնանշում են, որ Ռուսաստանում ոչ հանուած անգլո-ֆրանսիական բոլոր զօրախմբերից առնաւաժը Վլադիվոստոկին է, բայց նա էլ չի համապատասխանում իր վրայ դրած պարտականութեան։ Զոխո-սլովակների շարքերը շարունակ նօսրանում են։ Տիելով Սիբիրի երկաթուղագծի մի մասին և ձգտելով նրա երկաթութեամբ բարակ թելի պէս, չեխո-սլովակները զրկուել են պահեստից։ Նրանց գրաւած քաղաքներում շատ չնչին քաղաքապահ զօրքեր կան, նոյնիսկ պահակային ծառայութեան համար մարդիկ չեն բաւարարում։ Արևելեան Սիբիրը երկաթուղու երկու կողմերում, առանձին բացառութեամբ Խորհրդի իշխանութեան տակ է։ Զեխո-սլովակները շրջապատուած լրենց Թշնամի բանուորներով և գուղացիներով, լրենց առելի ելի դրութեան մէջ են ընդդուն։ Գիտակցիլով այդ նրանց շատերը արդէն հենց այժմուից փախչում են զանազան կողմեր։

ՄՈՍԿՈՒԱ, սեպտեմբ 1-ին։ Տպագրական բիւրոյի հաղորդագրութիւնը Լենինի առողջութեան մասին։ Գ-շաբաթական հաղորդագրութիւն 1-սեպտեմբերի, երեկ. ժ-ը 7 ին։ Զարկերակը՝ 125, լրիւ շնչառութիւնը՝ 34, ապրութիւնը՝ 38. Հիւանդ թոյլ է շնորհիւ բարձր տաքութեան։ Վէրքերի բնաւորները բարբարման նշաններ չունեն։ Տաքութեան բարձրանալը կապուած է արեան ներծծման հետ, որը ներս է հոսել կրծքաշապիկի խոռոչը և ուռոսկրի ջարգուածի շրջանը։ Հիւանդի ընդհանուր վիճակը թոյլ չի տալիս այսօր երեկոյեան սկսել ռենտգենեան ճառագայթներով կատարելիք քննութիւնը, որը պէտք է կատարի բժ. Դուղատովը։ Բժիշկները՝ Վէյսբրուտ և այլն. Ժողովրդական կոմիսարները Խորհրդի գործերի կառավարիչ՝ Վլադ. Բոնչ-Բրուևիչ։

ՊԱՏԵՐԱԶՄ

(Ա. Հ. Գ.)

ԲԵՐԼԻՆ, օգոստոսի 31 ին. Պատերազմական հաղորդագրութիւն Արևմտեան ճակատ։ Կրոնպրինց Ռուպրեխտի և Բոյնի բանակ։ Լիսի երկու կողմերում թշնամու հետախուզող խմբերը առաջ խաղացին Լօի (?) յետևը։ այժմ յետ են շպրտուած։ Կռուի դաշտում Արրասի հիւսիս-արևելք անգլիացիները երէկ նորից փորձեցին մեր ճակատը ճեղքել։ Կռուի դուրս բերելով մեծ քանակութեամբ բրոնեկիներ՝ անգլիացիներն ու կանադացիները վաղ առաւօտեան յարձակման դէմ եկան Արրաս-Կամբրէի խճուղու և Բապումից հարաւ-արևելք ընկած տարածութեան միջև 20 քիլոմետր տարածութեամբ։ Վիրաւորեմբերդիները յետ մղեցին թշնամուն, որը Խենդեկուրտից հիւսիս-արևելք մեր ձիաւոր գնդերը ուժգին էին առում թշնամու յարձակումները Վոլա—Վոնկուրտի և Ֆրեմկուրտի միջև։ Նրանք վերջերին Խենդեկուրտը, որ ժամանակաւորապէս գրաւուած էր թշնամու կողմից թշնամուն յետ մղելուց յետոյ, լրանք դուսեցին յարձակման, յետոյ թշնամուն Բիւլեկուրտի երկու կողմերը և այդ կէտի արևմտեան ամրանոցի յետևը։ Էկուրտից հարաւ արևմտեան-պրուսական գնդերը կատաղի կռուում յետ մղեցին թշնամու բ-զմիցս գրոհած յարձակումները։ Օքեր-լէյտենանտ Մաննի ինքնուրոյն հարուածները, որին օգնում էին 175-րդ հետևակ գնդի վաշտերը, հնարաւորութիւն տուին նորից գրաւել մեր կորցրած էկուրտը։ Բապումի երկու կողմերից պրուսական, սաքսոնական, բաւարական գնդերը ապարդիւն էին դարձնում թշնամու յարձակումները։ Կէսօրից յետոյ թշնամին կռուի հանեց թարմ դիւիզիաներ Արրաս Կամբրէի խճուղու երկու կողմերում։ Հետևակ մեծ ուժերի և մեծ քանակութեամբ բրոնեկիների կռուի հանելը պէտք է որոշէր ճակատամարտի վախճանը։ Երեկոյեան դէմ ճակատամարտը վերջացաւ մեր օգտին։ Սոմմից հիւսիս անգլիական յարձակումները Մորվալի և Կլիդի միջև յետ են մղուած։ Այն տեղերում, որտեղ թշնամին ներս էր մտել մեր դիրքերը, մեր հակայարձակումներով նորից յետ մղուց իր առաջին դիրքերը։ Ուազիից հիւսիս Ֆրանսիացիները մեծ ուժերով յարձակում գործեցին Լէրեմոնտի և Նուայոնից հիւսիս-արևելք գտնուող տարածութեան միջև գտնուած Ջրաբերքի հատուածի վրայ։ Թշնամու յարձակումների մեծ մասը դադարեցրած են մեր [illegible] ազդեցութեամբ։ Ա[illegible] կուից յետոյ [illegible] յետ է մղուած Շեմլյեից։ Նուայոնի կողմից թշնամու բազմաթիւ յարձակումները վերջացրին մեր երակի և հակայարձակումների ներքոյ։ Էլկուտում ուժգին թնդանօթամարտեր և հետևակային ճակատամարտեր են լինում։ Սուասոնից հիւսիս մենք ուղղեցինք մեր ճակատը։ յետ քաշելով մինչև Գասլի ամրութիւնները առաջ ընկած հարուածը դէպի արևելք կարգ դիր։ Իվինի-Գիւսի-Լէլանտ-Իվինի երէկուայ կռիւների ժամանակ ընկած են թշնամու ձեռքը։

Երկու օրուայ ընթացքում մենք խորտակեցինք 52 թշնամական օդանաւեր։

Ֆ. ՊՈԼԻՍ, օգոստոսի 31-ին։ Պատերազմական հաղորդագրութիւն։ Պաղեստինի ճակատ։ Ամբողջ ճակատում թշնամու ուժեղ թնդանօթային գրգռումներ են, որոնց մենք պատասխանում ենք հրետանու, հետևակային և գնդացիային կրակով։ Թշնամու հետախուզող խմբերը Երուսաղէմ-Նաբլուս խճուղու երկու կողմերում մեր յետ մղեցինք։ Անեղէի, Էլարդուի միջև մեր քաջ զանազան խմբերը ի դիր հանեցին ապատաժքան յարձակումները Հիջասի երկաթուղագծի վրայ։

ԲԵՐԼԻՆ, սեպտ. 1-ին։ Ռազմական հաղորդագրութիւն։ Արևմտեան ճակատ։ Կրոնպրինց Ռուպրեխտի և Բոյնի բանակ։ Իպրի և Լա-Բասէի միջև մենք կրճատեցինք մեր ճակատը։ Թշնամուն դէպի Խազերբրուկ առաջ ձգուած տարածութեան հատուածը։ Մենք թշնամուն թողինք Կեմմելը։ Մի քանի օր առաջ տրած մեր տեղափոխութիւնները թշնամու համար անկանելի էին մնացել։ Երէկ անգլիացիները մեծ ուժերով յարձակումներ սկսեցին մեր նախկին դիրքերի վրայ։ Մեր նոր դիրքերի առաջ թողած խառն խմբերը թշնամու դէմ կռիւ են մղում։ Թշնամին գրաւեց Կեմմելը և անցաւ Բէյլլ-Նէֆ-Բերկէնի և Լաւէի յետևը։ Արրաս-Կամբրէի խճուղու վերայ անգլիացիներն հետևակային յարձակումները շնչասպառ եղան մեր գծերի առջև։ Թշնամու ուժեղ, մինչև երեկոյ կրկնուող յարձակումները Խենդեկուրտի և Վալ-Բրոկուրտի միջև յաջողութիւն չունեցան։ Փոփրակի աջողութեամբ վարած կռիւներին ժամանակ Բիւլլեկուրտը և Էկուրտը մեզ մնացին։ Թշնամու ձեռքին Մորվալի և Գերոնէի միջև ուժեղ կրակից յետոյ անգլիական և աւստրալիական դիւիզիաները սկսեցին յարձակումները։ Մորվալի մօտ և Վակուրտից հարաւ-արևելք նրանք յետ են մղուած։

Շարունակ հակայարձակումների Բուշաէնը մեզ մնաց ձեռքին։ Դէպի հարաւ, կռիւներից յետոյ, մեր գծերն անցնում են՝ Բոշուէն-Գերոնէ խճուղու մօտով։ Թշնամու Բրէնի և Սառնէսի մօտ Սոմմն անցնելու փորձն ապարդիւն անցաւ։ Սոմմի և Ուազի միջև ֆրանսիական ուժեղ յարձակումները։ Ֆրանսիական դիւիզիոնները, որոնք երեկոյեան առաջացել էին երկու կողմից։ (?). Չ-դուրս են մասամբ մեր խրամատների առաջ մասամբ էլ մեր խրամատների մէջ։ Վերի մօտ թշնամին մեր հակայարձակմամբ յետ է մղուած։ Կէսօրին մօտիկ Բոլէնի և Մ-բ էնուրի մ. Ջ կատարած յարձակումները առաջողութեան մատնուեցին և մեծ կորուստներ հասցրին թշնամուն։ Երեկոյեան դէմ վերանորոգուած յառաջխաղացութիւնը բաժան-բաժան եղաւ մեր յարձակումների, որոնք բոլորն էլ յետ են մղուած։ Վանէի և Բրեսնոյի մօտ դէպի հիւսիսային կողմը առաջ խաղացող թշնամու մեծ ուժերը յետ են մղուած։ Ուազի և Էսի միջև [illegible] [illegible] նորից սկսեցին հետևակային ճակատամարտեր։ Թշնամու յարձակումները Ուազի հարաւային կողմից փշրուեցին մեր թնդանօթային և գնդացրային հրակի տակ։ Շամպանի հիւսիս կողմերում, Էլկնոյի հովտի կողմից թշնամին մեծ ուժերով յարձակումներ սկսեց։ Մեր հակայարձակումներով նախկին դրութիւնը վերականգնեցինք։ Էլեսի և Էսի միջև առաջխաղացումը նախորդում էին թշնամու մեծ յարձակումներ։ երեկոյեան դէմ թշնամին ընդհանուր յարձակում սկսեց խոշոր ուժերով։ Իվինի կողմից թշնամին առաջ անցաւ մինչև Ակրուա, որտեղ նրան կանգնեցրին մեր պահեստները։ Դէպի հարաւ մինչև Էսնաք թշնամին կրկնակի յարձակումներ գործեց, որոնք մեր գծերի մօտ անաջողութեան մատնուեցին։

Ֆ. ՊՈԼԻՍ. սեպտ. 1-ին։ Ռազմական հաղորդագրութիւն։ Պաղեստինի ճակատ։ Երէկ երկու հզօրագոյն թնդանօթաձիգ ուժեղ էր։ Երուսաղէմ—Նաբլուս խճուղուց արևմուտք մենք յետ մղեցինք թշնամու խուզարկու զօրախումբը։ Երիքովից հիւսիս թշնամու առաջ շարժուող հետևակային զօրասիւները ենթարկուեցին մեր թնդանօթների կրակին։ Երիքովի մօտ և Լենդեսսէից արևմուտք թշնամու հետևակային բանակների մէջ մեծ շարժում է նկատուում։ Մենք Աբէու—Տիլլու բանակը յաջողութեամբ ուրախեցինք։ Միւս ճակատներում աչքի ընկնող բան չկայ։

ԲԵՐԼԻՆ, 1 սեպտ.— Երեկոյեան ռազմական հաղորդագ.։ Ակրպրի և Սոմմի միջև պատերազմական գործողութիւնները են։ Անգլիական յարձակումները ընդհանուր առմամբ յետ են մղուած, միայն ուաժանկատի միջանի մասերում նրանց յաջողուեց մեր դիրքերը գրաւել։ Ուազի և Էսի միջև ֆրանսացիների մասնակի յարձակումները յետ են մղուած։

ՊԱՐԻԶ, 1 սեպտ.— Ռազմական հաղորդագրութիւն։ Անցած օրուայ ընթացքում ուժեղ թնդանօթաձիգը էր Սոմմի և հիւսիսային ջրանցքի անմանում։ Ֆրանսիական զօրքերը մարտացան Կուսի-լէ-Շատոյի մէջ։ Գեանից հարաւ նրանք գրաւեցին Կրեսի ս-Մոնա գիւղը։ Միւս ճակատներում օրն անցաւ հանգիստ։

ԲԵՐԼԻՆ, 31 օգոստոսի.—Երէկ. ռազմ. հաղորդ։ Այսօր անգլիացիները նկատեցին, որ մենք Իպրի և Լա-Բասէի միջև մեր ճակատը կրճատել ենք և սկսեցին առաջանալ մեր վերջապահ զօրքերի յետևից՝ Կեմմել-Բէյլլել-Նէֆ-Բերկէնի-Լաւէ։ Արրասից հարաւ-արևելք անգլիացիների մասնակի յարձակումները յաջողութիւն չունեցան։ Նուայոնի երկու կողմերում և Ուազի ու Էսի միջև կէսօրից յետոյ, ուժեղ թնդանօթային նախապատրաստութիւնից յետոյ, սկսուեցին ֆրանսիական յարձակումները։

ՄՈՍԿՈՒԱ, սեպտեմբերի 1-ին։ Բոլշեվիկ և ռուսաց դեսպան Եօֆֆէին Բերլինում. (Թարգմանուած է ֆրանսերէնից)։ Խորհրդի զօրքերը շարունակում են առաջ խաղալ բոլոր ճակատներում։ Այսպանի ուղղութեամբ խորհրդի զօրքերը վերցրին Լեբեդիչինն և Դուբրովկայան։ Սվիսա (?) ուղղութեամբ նրանք վերցրին Սելիցկոյան։ Հիւսիսային Դվինսկի առջև ոչ ոքին խորհուրդների առաջաւոր մասերը հասան Տրոյիցկան։ Զիլերին։

ՈՒԿՄԱՍՏԱՆ

Դրութիւնը Ռուսաստանում

Դոնի բնակչութիւնը բաժանուել 2 մասի, մէկը՝ գլուխ ունենալով գեներալ Կրասնովին յարել է գերմանական օրիենտացիայի և յենւում է գերմանական ուժերի վրայ, իսկ միւսը, որի պարագլուխ համարւում է Ալէքսէևը՝ յարում է ռուս-գաշնակցական օրիենտացիայի և յենւում է տեղական զօրքի և կամաւորների խմբերի վրայ։

Մեր ստացած ամենավերջին տեղեկութիւններից երևում է, որ այդ 2 կուսակցութիւնների մէջ ընդհարումները օրերի խնդիր է։ Կրասնովը և գերմանացիք որոշել են դիմել ընդհարման և իմբջի ազդեցութիւն են տեղական յայտնի գործիչ կազակների պարագլուխներից մէկին՝ Նիկոլա Էլպիդիֆորովիչ Պարամոնովին, որին, ինչպէս ասում են, ուղարկել են Գերմանիա։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՍՍԱՅԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բազալի դրութիւնը նոյնն է։

Դարձի զօրը փորձ է արել քաղաքից դուրս գալ, բայց առաջինները ստիպեցին նրանց հաճդիսացել։ Քաղաքի պաշտպանները գործում ամենաշատ դերը կատարում են թնդանօթաձիգները։ Երկաթուղու ծալքին մասը թուրքերի կողմից ամբակոծում է։

Վլադիկաւկազ են գնացել մի գերմանական և մի աւստրիական ազգ։ Նրանց նպատակն է առաջարկել ինգուշներին, կազակներին և այնտեղ գտնուող զանազան ազգութիւններին միմեանց մէջ հաստատել համերաշխութեան կապերը։ Այդ դրութիւնն պէտք է աջակցեն վերոյիշեալ ապանները։

ՐՈՆԻԿՈՆ

Զինուորական մինիստրի զեկուցման համաձայն կառավարութիւնը որոշել է առ զորամասերին բացի պարէնից և դրամական մենաշնորհից։

◆ Զինուորական մինիստրը կարգադրել է զօրախմբի հրամանները արձակել վրացիներին լեզուով։

◆ Ըստ գեներալ Մակաեւի հաղորդագրութեան Աշխուրի շրջանը միացել է Վրաստանին։ Գեներալը շնորհաւորում է վրաց կառավարութեանը։

◆ Դաեձակից. Գանձակից եկած մի թուրք ասաց, որը այժմ ծառայում է առաջնակարգ բանակում, պատմում է մեզ հետևեալը. Գանձակում ընդհանուր դժգոհութիւնը առաջնակարգ ուժիմից սառնում է անհանդուրժելի չափերը, որովհետև առաջինները ամեն ինչ խլել են լրենց ձեռքը և տեղական թէ իշխանութիւնը և թէ ազգաբնակութիւնը բոլորովին կաշկանդուած դրութեան մէջ է։

◆ Նոյն սպայի պատմելով Բագուից դէպի հարաւ առաջնակարգ զօրքերը խորտակել են մի փոքրիկ անդլիական նաւ։

◆ Գանձակի ինտելիգենցիայի կարծիքով առաջինները մատդիր են տալիս թէ Ադրբէջանը և թէ Վրաստանն ու Հայաստանը։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 7-ին ն. Հ. Բ. Ընկ. տան մէջ կը կայանայ հայրենասիրական միութիւնների վարչութիւնների ատենապետ ընդհանուր ժողովը—գաղթականական հարցը քննելու համար։ Վարչութիւնը խնդրում է բոլոր անդամներին ներկայ լինել այս նիստին։

◆ Վրիպակ.—Մեր լրագրի № 1 առաջնորդողում 13-րդ տողում սղագրել է մի անախորժ սխալ, որը կարևոր է ուղղել։ Տպուած է՝ «պետական և ազգայնական սկզբունքներն են», կարդալ՝ «պետական և ազգային սկզբունքներն են»։

Նոյն համարում 3-րդ երեսի 2 րդ սիւնակի 23-րդ տողում պ. Ս. Յարութիւնեանի «Զրուցածում տպուած է «խառն մահմեդականներից» պէտք է լինի «խառն՝ քրիստոնեաներից և մահմեդականներից»։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պետրոգրադի վրաց ազգային խորհուրդը դրում է գեներալ Օդեշելիձէին հետևեալը. «Խորհուրդների իշխանութիւնը բոլոր վրացիներին զինակոչի է ենթարկում. վրաց ազգային խորհրդի բոլոշքները ոչ մի հեռանք չեն ունենում, նամանաւանդ որ լրագրերում լուրեր են ստացւում, որ Վրաստանում ռուս օֆիցերներին առանց որևէ պատճառների բանտարկում են և պահանջում են խօսել վրացերէն լեզուով»։ Պետրոգրադի վրաց ազգային խորհուրդը խնդրում է Վրաստանի կառավարութեանը թոյլատրութիւն տանալ վրացիների հայրենիք վերադառնալու համար։ Մանաւանդ իրեղպովնրանք գալու հնարաւորութիւն չունեն։

Փոթի է ուղարկուած մի մեծ դինամօ-մոտոր Փոթիում ռադիոստանցիա կառուցելու համար, որը պիտի ունենայ մեծ ոյժ և հնարաւորութիւն պիտի տայ հաղորդագրութիւնները ստանալ ուղղակի Բերլինից։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ
Հրատարակիչ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Թիֆլիս, տպարան «Մամուլ» Լորիս-Մելիքեան փողոց, № 22.